

ԽԱՐԱԶԻ ԾԵՃԵՏՑ ԼԻՔԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ...

որ նախագահ Լաիտի ղեկավարության իբրեւ պրոֆեսոր, կ'ամրապնդուի լիբանանեան միասնականութիւնը...

Շարունակուած Ա. Էջէն

բռնարարքներէն ապա- տագրելու բռնագրաւ- ւած հողերը: Վարչապետ Ռաֆիք Հարիրիի Քրքայքէմի մէջ...

սի մը ընթացքին յայտա- րարեցին քննարկուած հիմնական հարցերն ու թղթածրարները, որոնք հիմնական ձեռնարկ...

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ՄԵԿ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԼԻՔԱՆԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ՓՈՒՆԵԼԵՆ ՆԱՄԱԿ ՄԸ ՀԱՐԻՐԻԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթըն Պէթըրը, որ յայտնեց, թէ ամերիկեան Քոնկրէսի մէջ պատուիրակութիւնը մօտ օրէն Պէյրութ պիտի այցելէ:

տայ Լիբանանի պետական պիւտճէի բացը նուազեցնելու նպատակով աշխատանքներուն տարողութիւնը: Մէկ ժամ տեւողութեամբ հանդիպումին ընթացքին Պէթըրը յայտնեց իր լատենտութիւնը...

ԿՈՉ՝ 1984Ի ԾՆՈՒՆԴ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ Բանակի հրամանատարութիւնը երէկ կոչ ուղղեց լիբանանցի բոլոր 1984ի ծնունդ ճրիտասարդներուն, որպէսզի երէք ամսուան ընթացքին ներկայանան իրենց շրջանի յատուկ կեդրոնները...

Հանդիպումին ներկայ էին արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ եւ նախագահ Լաիտիի արտաքին գործոց նախարարութեան քանաքեր Համիտ Ռիտա Ասէֆի, նշեալ նախարարութեան Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկէի հարցերու ընդհանուր տնօրէն Մոհամետ Ալի Սուպիանի, Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մատուտ Իտրիսի, դեսպանատան քաղաքական հարցերու խորհրդակցական Ապու Հասան Ասաֆարի:

ՄԱԿԻ Ա. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄՆԱՅՈՒՆ...

Հանդիպումին ետք, Խարապի յայտնեց, որ դրական մթնոլորտի մէջ քննարկուած են նաեւ Լիբանան-Իրան խորհրդարանական մակարդակի վրայ գործակցութիւնը:

Իրաքի հետ՝ շեշտելով մակայն, որի վերջոյ իրաք պիտի ապաշինուի՝ խաղաղութիւնը պիտուրական միջոցներով: Արմիթէյձ դիտել տուաւ, որ բոլորին համար ալ նախընտրելի է, որ Իրաքը ինքնապաշտպանուի, սակայն եթէ յամառի՝ այլ միջոցառումներ պիտի որդեգրուին:

Շարունակուած Ա. Էջէն տայ, թէ հաւատացեալ իւրաքանչիւր արաք իրապետներն ու պարտաւորութիւնը ունի ճակատելու Քուէյթի ամերիկեան ուժերուն դէմ: Բարեբր անկէ հրապարակուած յայտարարութիւնը կը խոստանար, որ թղթածրարը պիտի ենթարկուի անկողմին ինկած արաք պոհերը նահատակներ են:

ԼԻՔՈՒՏԻ ԾԱՐՔԵՐՈՒՆ ՄԷՉ ...

Շարունակուած Ա. Էջէն ֆաթի կողմէ, որ հարթացի աւարտին: Ծարունի առաջարկուած պետութիւնը պիտի յայտարարուի Կապայի եւ Այսրյորդանանի հողերուն մէջ մասին վրայ: Լիբանանի ընտրութիւններուն մէջ մասին վրայ պիտի դժուարացնէ Ծարունի առաջարկութիւնը: Եթէ ան Յունուարի մէջ վերականգնուի Այդ պարագային, Ծարուն իր կառավարութեան մէջ պիտի ունենայ ժայռայեղական լիբուտականներ, որոնք պիտի մերժեն պաղեստինցիներուն հետ խաղաղութիւնը:

Ծարունի առաջարկուած ծրագիրը մերժուեցաւ նաեւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաբի ինքնուրուի մնայուն անդամ Չինաստան ողջունեց Իրաքի ներկայացուցած թղթածրարը ՄԱԿ: Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը խոստանար, որ թղթածրարը պիտի ենթարկուի անկողմին ինկած արաք պոհերը նահատակներ են:

ԱՅՆՃԱՐ Ը. Յ. ԳԱՇԱԿՑՈՒԹԵԱՆ 112ԱՄԵԱԿ Կը բանախօսէ՝ ԸՆԿ. ԳԱՒԻԹ ԼՈՔԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան քաղաքաշինութեան նախարար

ԿՈՒՉՈՒԻ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ

ՎՈՒՅՈՒՄ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՄԿԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՀԱԶԴ Ծակոր, Պերճ եւ Լորիս Պէքէրէճեան Տիկին Պերճուհի Մակտեան եւ զաւակուը Տէր եւ տիկին Յակոբ Պէքէրէճեան եւ զաւակուը Տ. Բարզէն Ա. քննչ. Մագսուտեան Հոգչ. Տ. Գրիգոր վրդ. Մագսուտեան Թօփայեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝

Vivez en lumiere! C. AYANIAN & SONS Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmayze, (01) 447000-445396 - (03) 627728/9 Fax: (01) 265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb www.ayanian.com

AFHIL ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ RENT AND SALE AT HOME Wheelchair Walker Electric Bed Manual Bed Water Mattress Cans Sticks Serum Tripod Walking Frame HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՖՐԱՆՍԱՅԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԷՆՔԻՆ ՄԱՍԻՆ

Քսանդերկու տարի առաջ, Մարսելի հայկական թաղամաս Պոմոնի բարձունքին, իր լոյսի դուռը բացած էր Համազգային կրթական կենտրոնի գրադարը: Համազգայինի կենտրոնական վարչության նախագահ Ռոբերտ Բուրժուա մեր հաջողակ ջանքերով երեք տարի անընդմեջ կառուցվել էր Ֆրանսիայի մեծագույն թաղամասերից մեկում՝ Մարսելի կենտրոնական թաղամասում:

Տարիներ տեւած դիմումներէ, միջամտութիւններէ եւ ուսումնասիրութիւններէ ետք, քաղաքապետարանի պատկանող դպրոցին կից հողաշերտը կը տրուէր Համազգայինի, աւելի քան եօթը հազար քառակուսի մետր տարածութիւն: Մինչ այդ, դպրոցի վարձու շէնքը կը գնուէր: Դպրոցը «դատապարտուած» էր անելու: Նոր շէնքի, համալիրի կարիք կար: Կենտրոնական վարչութիւնը, տեղւոյն խնամակալութեան հետ համախորհուրդով, կեանքի կոչեց շինութեան յանձնարարումը մը, որ կատարեց անհրաժեշտ շինարարական եւ հիմնադրամի գոյացման նախապատրաստութիւնները:

Իրբեւ մեկնարկ, Կենտրոնական վարչութեան հրահրով, համագործակցութեան շինութեան յանձնարարութիւնը եւ Մարսելի ճեմարանի խնամակալութեան, տեղի ունեցաւ մեծ հացկերոյթ մը, ծովափնեայ զեղատեսիլ հիւրանոցի մը սրահներուն մէջ, 7 Դեկտեմբերին, հովանաւորութեամբ՝ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ. Ամենայն հայոց եւ Ն. Ս. Օ. Ս. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներուն: Ներկայ եղան Արամ Ա. վեհափառը, Գարեգին Բ. կաթողիկոսի ներկայացուցիչ, Արեւմտեան Եւրոպայի կաթ. պատուիրակ եւ Փարիզի առաջնորդ Գիւտ Արք. Նազարեան, Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպան Էտիէ Նալպանտեան, շինութեան յանձնարարութեան անդամներ, խնամակալութիւն, երեսփոխան Քրիսթոֆ Մաս, որ կը ներկայացնէր նաեւ Ընդհանուր Խորհուրդի նախագահ ժան - Նոէլ Կերիւնին, ծերակրօնական եւ Մարսելի քաղաքապետ ժան - Գլոտ Կոտէնի ներկայացուցիչ Ժիլպէր Բէրէրեան, 13րդ թաղամասի քաղաքապետ Կ. Յովսէփեան, Համազգայինի կենտրոնական վարչութեան անդամներ, Հայ Աւետարանական Եկեղեցիի հովիւ Յովէլ Միքայէլեան, հայ կեանքի մէջ դերակատար կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս Արեւմտեան Եւրոպայի Հ. Յ. Կենտրոնական կոմիտէի, ՀՕՄԻ եւ Ֆրանսահայ Կապոյտ ինչի, Հ.Մ.Ը.Մ. - Ֆրանսի, Շնորհք Գալուստեան Միութեան, թաղկանութիւններու, Մարսելի Հ.Մ.Ը.Մ.ի, Ֆրանսայի Հայկական Կազմակերպութիւններու Հա-

Շարք՝ էջ 9

Հ. Յ. Գ. 112ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ՄԵՋ

Հ. Յ. Գ. Դաշնակցութեան հիմնադրութեան 112ամեակին տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 7 Դեկտեմբերին Համազգայինի Սիտնիի Արշակ եւ Սօֆի Գոյտուն վարժարանի «Ներսէս եւ Լեւոնի Նալպանտեան» սրահին մէջ:

Հանդիսութեան ներկայ էին օրուան բանախօս, Հ. Յ. Գ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեան, Աւստրալիոյ մէջ ԼՂՀ ներկայացուցիչ՝ վարուժան Իսկէնտէրեան, ուղեկից միութիւններու վարչութեանց ու տեղեկատուական կենտրոններու ներկայացուցիչներ եւ հոծ թիւով հայրեր:

Հ. Յ. Գ. Երիտասարդական Միութեան խօսքը փոխանցեց ընկ. Արմէն Գարսեան: Խօսք տրուեցաւ Հ. Յ. Գ. Դրօ Առանձնակի կոմիտէի ներկայացուցիչ՝ ընկ. Պերճ Մոմձեանին, որ հրաւիրեց Հ. Յ. Գ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեանը տալու օրուան պատգամը:


Արգարեանը խոսեց իր օրուան պատգամը: Ինչպէս որ է հանդէպ հայ ժողովուրդին եւ նշեց, թէ Հ. Յ. Գ. պապային կուսակցութիւնն է, կը գործէ 30 տարբեր երկիրներու մէջ՝ նպատակ ունենալով ապահովութիւնն ու շահերը հայ ժողովուրդին:

Ընկ. Հ. Մարգարեան յիշեց, թէ Հայաստանի հատուկ էր «Հ. Յ. Գ. չէ անտեսած Սփիւռքը, եւ թէ սփիւռքահայութիւնը պէտք է հպօրանայ, կապմակերպուի, որպէսզի օգնէ Հայրենիքին: Ան անդրադարձաւ Արցախի տագնապին, Ջալալաբադի հայութեան խնդիրներուն եւ Հայաստանի ընկերային-տնտեսական վիճակին:

Խօսելով Հայաստանի ներկայ վիճակի մասին՝ Հ. Յ. Գ. Բիւրոյի ներկայացուցիչը ըսաւ. «Հայաստանի վիճակը համեմատած այլ երկրների հետ՝ վատ է, իսկ եթէ համեմատեք ինքն իր հետ, այսինքն անցեալ քանի մը տարիներին եւ նախկին խորհրդային դրացի երկրներին՝ յաւ է եւ յոյս կայ աւելի յաւանալու»:

Ընկ. Մարգարեան նաեւ անդրադարձաւ Հայաստանի մէջ տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններուն: Ան նշեց, թէ քաղաքական ուժերը իրարու հետ պայքարին մէջ պէտք է յարգեն բարոյական որոշ սկզբունքներ, ընտրութիւնները պէտք է ըլլան ապստ, արդար եւ թափանցիկ: «Հ. Յ. Գ. կը քաջալերէ, որ խորհրդարանի անդամները ըլլան կուսակցութիւններու ներկայացուցիչներ, քան թէ՛ անիշխանական ու իրենց անձնական շահերը հետապնդող անձեր», ըսաւ ան եւ իր խօսքը ւարժեց՝ ըսելով՝ «Ճակատագրական օրեր կ'ապրինք, ինչնք միասնական, վճռական եւ յաղթանակը չի ուշանալու»:

Հանդիսութեան էտք, մինչեւ անտեսան կանուխ ժամերը մեծ թիւով հայրերին երու մասնակցութեամբ տեղի ունեցաւ դաշտահանդէս-խրատական ընթացք:



Տեղական մամուլը իր 9 Դեկտեմբերի թիւով լուսարձակի տակ առած է բնօրինակի հետաձայնի թղթածրարին արձագանգները, քաղաքական ներքին կեանքին մէջ տիրող իրադարձութիւնները, Պաղատի կողմէ կենտրոնացած թղթածրարին յանձնումը եւ միւս կողմէ Ուաշինգթոնի պատերազմի պատրաստուիլը:

«Տիւրք» օրաթերթը գրած է, թէ բնօրինակի թղթածրարը քննութեան առջեւ է եւ պաշտօնական աղբիւրներ լուստեսութիւն կը յայտնեն:

«Մուսթափալ» նշած է, թէ բնօրինակի հարցը կը գտնուի լուծման ճամբուն վրայ: Ըստ թերթին, Ֆրանսիայի սուլտանի պալատի մէջ գտնուող մեծ թղթածրարը կը տեսնուի ընդհանուր կոչ եղած է:

«Մուսթափալ» հարց կու տայ, թէ վարչապետ Հարիրի ինչու չգործեց «սրտերու լուստեսութիւն» երթի համաձայն եւ շայնքեց Պաապտան:

Ըստ թերթին, Փաղատագաւորներու ընդհանուր թեմային կազմակերպած մէկ ժողովուրդական հարցումը արձագանքեց իրարմէն:

«Մուսթափալ» նշած է, որ մեծ թղթածրարը արտադրուեց 1970-ական թվականներին:

«Մաֆի»-ի համաձայն, Կենտրոնական Դրամատուրը եւ դրամատուներու ընկերակցութիւնը պարտքը նուազեցնելու նախագիծ մը կը քննարկեն:

Թերթը նշած է, թէ հակառակ բնօրինակի թղթածրարին շուրջ ծագած վէճերուն, իշխանութեան երեք պետերուն «սրտերու լուստեսութիւն» կը շարունակուի:

«Մուսթափալ» նշած է, որ մեծ թղթածրարը արտադրուեց 1970-ական թվականներին:

Ըստ թերթին, Սֆէյր պատրիարք ըսած է. «Կը փափայնեմ այնքան հարաւ, սակայն պայմանները ձեռնադրու չեն»:

«Մաֆի» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ բնօրինակի հարցը հասած է տեղի մը, որ անիկա դարձած է քանի մը օրերու եւ մանրամասնութիւններու հարց: Թերթը նաեւ գրած է, թէ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆերայի կոչ կ'ուղղէ երկխօսութիւնը ամբարշտելու ձգտող «Պէյրուս»-ը համազգայինի կայքէջին:

«Մուսթափալ» նշած է, որ մեծ թղթածրարը արտադրուեց 1970-ական թվականներին:

«Քիֆահ Արապի» գրած է. «Այսօր կը կնքուի բնօրինակի բարեփոխումը համաձայնագիրը: Տօներէն առաջ Հարիրի համաձայն գտնուեցաւ նախագահ Լախուտի հետ բարե-

Միւս կողմէ, Շարուն Լիբանանը կ'ամբաստանէ երկրին մէջ «Քալիտա» մարտիմներու կենտրոններու ունեւնալով, իսկ նախագահ Լախուտ անհիմն կ'որակէ եւ ամբողջովին կը մերժէ այդ ամբաստանութիւնները:

«Մուսթափալ» նշած է, որ մեծ թղթածրարը արտադրուեց 1970-ական թվականներին:

«Քիֆահ Արապի» գրած է. «Այսօր կը կնքուի բնօրինակի բարեփոխումը համաձայնագիրը: Տօներէն առաջ Հարիրի համաձայն գտնուեցաւ նախագահ Լախուտի հետ բարե-

Միւս կողմէ, Շարուն Լիբանանը կ'ամբաստանէ երկրին մէջ «Քալիտա» մարտիմներու կենտրոններու ունեւնալով, իսկ նախագահ Լախուտ անհիմն կ'որակէ եւ ամբողջովին կը մերժէ այդ ամբաստանութիւնները:

«Մուսթափալ» նշած է, որ մեծ թղթածրարը արտադրուեց 1970-ական թվականներին:

«Քիֆահ Արապի» գրած է. «Այսօր կը կնքուի բնօրինակի բարեփոխումը համաձայնագիրը: Տօներէն առաջ Հարիրի համաձայն գտնուեցաւ նախագահ Լախուտի հետ բարե-

Միւս կողմէ, Շարուն Լիբանանը կ'ամբաստանէ երկրին մէջ «Քալիտա» մարտիմներու կենտրոններու ունեւնալով, իսկ նախագահ Լախուտ անհիմն կ'որակէ եւ ամբողջովին կը մերժէ այդ ամբաստանութիւնները:

«Մուսթափալ» նշած է, որ մեծ թղթածրարը արտադրուեց 1970-ական թվականներին:

ՄԱՍՆԱԿՅԷ՛ ԼԵՄԻ E-MAIL ԱՐՇԱԻՆ

Վերջին քանի մը շաբաթներուն ընթացքին, Նախիջեանի պատմական Ջուլֆա (Ջուլա) քաղաքի հայկական կորողները կ'ենթարկուին սիսթեմաթիք բարբարոսութիւններու եւ քանդումներու՝ ոչնչացնելու համար այդ շրջանին մէջ հայկական պատմական ներկայութեան վկաները:

Այս բոլորին դիմաց, միջազգային պատկան իշխանութիւնները լուռ կը մնան: Այս ուղղութեամբ, ԼԵՄԻ Կենտրոնական վարչութիւնը կազմակերպած է բողոքի e-mail արշաւ մը, ուղղուած՝ ԵՆԻՍԵՄՔՕԻ ընդհանուր ասօրէն Բուայիթր Մացուրայի: Չէր բողոքի ձայնը միջազգային համայնքին լսելի դարձնելու եւ մասնակցելու համար այս e-mail արշաւին, այցելեցէք ԼԵՄԻ կայքէջը՝ www.lemagan.com: Կրնաք նաեւ հեռագրով հետեւեալ թիւերուն՝ 01-243383 կամ 03-802774:

Mr. Koichiro Matsuura
Director General of UNESCO
Dear Sir,
It is with great horror that we are continuously receiving the news of the systematic destructions of Armenian medieval Khatchkars in the historic town of Djulfa in Nakhitchevan.
We cannot accept that the crime against the Armenian cultural heritages continue, while the international community and especially UNESCO remain silent.
As you have successfully prevented the destruction of Armenian monuments in Azerbaidjan in the near past, we ask you to strongly intervene in order to stop these barbarous acts.
Respectfully Yours,

ԱՉԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՄԻՆ
Կազմակերպութեամբ՝
ՂԱՍԱԽՕՍՆԱԿԱՆ Ա. ՁԵՈՆԱՐԿ
Նիւթ.
«3-6 տարեկան երեխաներուն կազմաւորման ընթացքը եւ դժուարութիւնը»
Դասախօսուիի՝ ՎԵՐԱ ՍԻՍԵՆԵԱՆ
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 12 Դեկտեմբեր 2002ին, առաւօտեան ժամը 10:00ին վարժարանի սրահին մէջ:
ԵՐԱԿՐ

ԿԱՂԱՆԴԸ ԴԻՍԱԿՈՐԵԼ Նուիրելու համար բարեկամներու եւ յաճախորդներու
ԿԱՅԱՍԱՆԵԱՆ ԳԻՆԻՈՎ

1- ՆԱՅԻՐԻ ԳՈՆԵԱՔ՝ 20 տարուայ նուիր յատուկ ծրարումով:
2- VEDI ALCO արտադրութեան 15 տեսակ անունով գինի նաեւ փայտ ստեղծով:
3- Գոնեաք զանազան անուանատեսակով:
4- Գինի KHORAN 3 լիթր՝ նուիր տուվով:
5- Գոնեաք Souvenir ԱՐԱՐԱՏ 10տարուայ:
VAK Trading Ըստ., Երև.: 03/626177 - 03/773609
եւ UNIVERSE վաճառատուն, Փոլիկարպոս. «Սարդարապատ» շէնք

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Շուկիի Ս. Յարութեան եկեղեցւոյ ծխախոտ շրջանի մեր հաւատացեալ ժողովուրդին կ'ուզեմք յայտնել, որ նուիր ունեւնալու հետեւեալ փոփոխութիւնները.
- Վաչէ քինյ. Թաթոյեան նշանակուած է Սոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ փոխարինելով Կոմիտաս քինյ. Փանոսեանը.
- Շուկիի նորոք Սարգիս քինյ. Սարգիսեան նշանակուած է Շուկիի Ս. Յարութեան եկեղեցւոյ Բ. շրջանի հոգեւոր հովիւ՝ փոխարինելով Վաչէ քինյ. Թաթոյեանը:
ԴԻՄԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Սեն ժոզէֆ համալսարանի Արեւելեան Գրադարանը, պատմագիտական եւ կրօնագիտական բաժանմունքները ձեռք կը հրակիրեն
ՂԱՍԱԽՕՍՆԻԹԵԱՆ ՍԸ՝
ՓՐՈՑ. ԱՐՄԵՆ-ՔՕՍ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ կողմէ
Նիւթ.
ՂԱՍԱԽՕՍՆԱԿԱՆ ԿՈՎԿԱՍԵՆ ՄԻՆՉԵՄ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ
Սահիկներու ցուցադրութիւն
Տեղի պիտի ունենայ վաղը՝ Գործաշաբթի, 11 Դեկտեմբեր, 2002, երեկոյեան ժամը 7:00ին, «Պիլլեթեթ Օրիանթալ», Սեն ժոզէֆ համալսարանի մէջ, Մեծ փողոց:

IGOL
MOTOR OIL
FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ
ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռագրեալ՝ 01-242556 թիւին:

ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ

1882 - 1940

ԾՆՆԴԵԱՆ 120ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ



Երբ այս տողերը կը գրեմ, կը մտածեմ, թէ արդեօք մենք՝ ապրողներս, ոչ թէ լրիւ, այլ նոյնիսկ կէսով չափ արդարութիւն կ'ընենք: Աւելին. նոյնիսկ քիչ մը ապերախտ չենք, որ կարծենք, թէ քանի մը տող գրելով պարտաւանութիւն կատարած կ'ըլլանք մեր խմբագիրներուն, մամուլի ու մշակոյթի սպասարկողներուն, ազգային ու կուսակցական գործիչներուն հանդէպ, երբ անոնք իրենց «ամբողջ կեանքին ընթացքին ամբողջական նուիրումով ծառայած են ազգային, կուսակցական ու եկեղեցական վեհ նպատակներու իրագործման համար» (Գ. Մելիքիսեանի):

Արշակ Ջամալեանի մահով, 62 տարի առաջ, 27 Դեկտեմբերի 1940ին, Փարիզի մէջ, հայ ժողովուրդը կորսնցուց իր ազնիւ ու նուիրուած գաւազներէն մէկը, իսկ Հ. Թ. Դաշնակցութիւնը իր արժանաւոր գործիչներէն մէկը:

Բազմատաղանդ հայ մտաւորական, քաղաքական, յեղափոխական ու հասարակական գործիչ եւ ընկերային հարցերու տեսաբան: Արտաքինում ներկայանալի, բնաւորութեամբ իրաւահարող, օտուտած բացառիկ ուղիւնութեամբ եւ միշտ լաւատեսութեամբ տրամադրուած՝ դէպի գործը: Արշակ Ջամալեանի (բուն անունը՝ Արշակ Իսահակեան) բովանդակ կեանքը եղած էր ՆՌԻԻՌՈՒՄ՝ հայութեան եւ Հայ Դատին, բառին բովանդակ իմաստով:

Ծնած էր Գանձակ 22 Սեպտեմբեր 1882ին, բարեկեցիկ ընտանիքի մէջ: Դեռ պատանի տարիքին՝ կը մեռնի մայրը: Արշակ որը կը մնայ իր փոքր եղբոր եւ քրոջ հետ: Բայց երբեք գրկանքներու չ'ենթարկուիր, որովհետեւ ունէր հոգածու հայր մը (հայրը՝ ոսկերիչ Ջամալի, որուն անունով հետագային դարձաւ Ջամալեան), իսկ մայրը գումար մը կտակած էր իր զաւկին կրթութեան համար:

Արշակ Գանձակի հայկական նախակրթարանը կը յաճախէ: Երբ ցարական հրամանով 1892ին կը գոցուին հայկական վարժարանները, հայրը զինք կ'ուղարկէ Գանձակի ուսուսական դպրոցը՝ իր ապագայ առեւտրական գործերը ղեկավարելու համար: Արտակարգ ընդունութիւններով ցուց կու տայ ուսուսելէն եւ ուսուցիչներուն մէջ: Բայց հետագայ դէպքը պատճառ կ'ըլլայ, որ ան ստանայ հայեցի կրթութիւն:

Վանի Յայնկոյաններու դպրոցի ուսուցիչներէն Պլուզ Կարօ, որ 1896ի ջարդերուն գաղթական դարձած էր եւ ապաստանած էր էջմիածին՝ հազարի մօտ գաղթական վանքիներու հետ, Նրիմեան Հայրիկի կողմէ կը ղրկուի Գանձակ: Պլուզ Կարօ, ժողովրդական դէմք մը, շուտով կը բարեկամանայ Արշակի հայրենասէր հօր՝ Ջամալի հետ, որ սկսած էր մտահոգուիլ իր զաւկին ուսուցումէն: Պլուզ Կարօ կը սկսի հայրէնի եւ ազգային պատմութեան դասեր տալ Արշակին, որ իբրեւ յառաջադէմ աշակերտ ուսուցիչին խորհուրդով կ'ուղարկուի էջմիածինի Գէորգեան ձեմարանը:

1897 Սեպտեմբերին Արշակ Ջամալեան Գանձակի առաջնորդի յանձարարական նամակով եւ տարեկան 200 ուսուցիչ թոշակով կ'ընդունուի էջմիածինի Գէորգեան ձեմարանին Գ. դասարանը: Այդ շրջանին ձեմարանն յաճախող 275 աշակերտներէն հազիւ 3-4 հոգի թոշակ կը վճարէր, իսկ մնացեալները առհասարակ ձրիաւաթ էին:

Գէորգեան ձեմարանը Հայաստանի միակ բարձրագոյն վարժարանն էր: Հոգեւոր հաստատութիւն մը ըլլալու եւ եկեղեցականներ պատրաստելու իր կոշտմէն անդին, Գէորգեան ձեմարանը պատմականօրէն դարձած էր խորունկ եւ բազմակողմանի ծանօթութիւններու, ընդհանուր զարգացման եռուն օճախ մը, ուր շատերու կարգին, Արշակ Ջամալեան եւս խորացուց Հայոց Պատմութեան, լեզուին եւ առհասարակ հայ մշակոյթի իր ծանօթութիւնը:

Ձեմարանի բաժինը 1901ին աւարտելէ ետք, Ա. Ջամալեան տարի մը կը հետեւի լսարանին, որ համալսարանի նման էր եւ որուն հետեւող ուսանողները որոշ ազատութիւններ ունէին: Անոնք գաղտնի կը կարգային Հ. Թ. Դաշնակցութեան պաշտօնաթերթը «Դարշակ»ը եւ կը հրատարակէին ձեռագիր «Նամակ» անունով մեծածաւալ ամսաթերթ մը, ուր Արշակ հասարակական խնդիրներու մասին կը գրէր: Ան շարդարութեան համար կ'ապարտուէր ուսումնասիրութիւն մը «Սոցիալական հասարակական գաղափարները Բաժնի»-ն եւ «Կայծեր» վէպերում» խորագրով: Լսարանի գրականութեան ուսուցիչ Մանուկ Աբեղեան ուսուցչական կազմի ուղարկութեան կը յանձնէ այս արժէքաւոր շարդարութիւնը, որ կը կարդացուի միացեալ լսարանին մէջ:

Ա. Ջամալեան թէեւ մտաւորական ձիրքերով օտուտած էր, բայց իր տաքարիւն խառնուածքին եւ ազգային իրթութեան շնորհիւ կանուխէն կը նետուի հասարակական կեանքին մէջ, ուր կային այրող հարցեր, որոնց հանդէպ կարելի չէր դիտողի դերին մէջ մնալ:

Գանձակի մէջ սկսած էին հայ - թաթարական կռիւները: Արշակ Ջամալեան երեք տարի աւելի կը գործէ Հ. Թ. Դաշնակցութեան կազմակերպական աշխատանքներուն մարզին մէջ եւ կը մասնակցի ցարական ոստիկանի մը ասհարեկման գործին, որուն պատճառով եօթը ամիս կը բանտարկուի: Ազատ արձակուելէն ետք, 1905ի աշնան կը մեկնի Գերմանիա եւ կը հետեւի Պերլինի համալսարանի քաղաքական-ընկերային գիտութիւններու ճիւղին:

Ա. Ջամալեան Հ. Թ. Դաշնակցութեան Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան հիմնադիրներէն մէկն էր: Միութիւնը կը հրատարակէր «Ուսանող» պարբերականը, եւ ինչպէս նաեւ գրքոյկներ՝ հայերէնով, ֆրանսերէնով եւ գերմաներէնով: Եւրոպայի Ուսանողական

Միութեան կողմէ ան կը մասնակցի 1907ին Վիեննայի մէջ տեղի ունեցած Հ. Թ. Դ. Դ. Ընդհանուր ժողովին եւ արժանաւորապէս կը ներկայացնէ ազգային դատով տոգորուած հայ ուսանողութիւնը: Ժողովին կը մասնակցէին Ռուսիոյ դաշնակցական ուսանողութեան ներկայացուցիչ Աւ. Շահաթունեան եւ Գերմանիոյ մէջ ապրող դաշնակցական ուսանողութեան ներկայացուցիչներ Երուանդ Յրանգեան եւ Մարտիրոս Յարութիւնեան:

Համօ Օհանջանեան կը վկայէ, որ Ընդհանուր ժողովէն ետք, Արշակ Ջամալեան Օհանջանեանի կը յանձնէ ընդարձակ ուսումնասիրութիւն մը՝ Դաշնակցութեան տեսաբանութեան մասին. ուսումնասիրութիւնը պիտի հրատարակուէր «Յառաջ» մատենաշարով: Մակայն խուզարկութեան ժամանակ, ուսուստիկանները Հ. Օհանջանեանի մօտ կը գտնեն այդ ձեռագիրը, որ յետոյ, քննիչ Լեփինի կողմէ կը թարգմանուի ուսուսելէն եւ նիւթ կը ծառայէ Դաշնակցութեան դատավարութեան ժամանակ, 1912ին: Ուսումնասիրութեան հայերէն ձեռագիրը ղտքարտարար կորսուած է, իսկ ուսուսելէն բնագիրը տպուած է դատական գործի հատորներուն մէջ:

1909ին, Պերլինի համալսարանէն գերմանական կրթութիւն ստացած Ա. Ջամալեան կը վերադառնայ Կովկաս, ուր սկսած էր հալածանքը Հ. Թ. Դաշնակցութեան դէմ: Հրապարակի վրայ քիչեր կ'երեւին, որոնց հետ Ջամալեան ինք եւս առանձին կերպով գործի կը լծուի: Չորս տարի պատմութիւն կը դասաւանդէ Թիֆլիսի Ներսիսեան վարժարանին մէջ, միեւնոյն ժամանակ Նիկոյ Աղաբալեանի եւ վիպասան Նար Դոսի հետ կը խմբագրէ Հ. Թ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյի պաշտօնաթերթը «Հորիզոն» օրաթերթը: Այս ժամանակաշրջանին Ն. Աղաբալեանի հետ կ'այցելէ Կարին եւ Տարսն:

Թիֆլիսի մէջ անոր առջեւ կը բացուի գործունէութեան ընդարձակ ասպարէզ մը: Դպրոցին մէջ սիրուած էր երիտասարդութեան եւ աշխատաւորներուն համար, ինչպէս նաեւ գրական շրջանակներուն մէջ, եւ եռանդով կը մասնակցի գրական-հասարակական կեանքին:

1912 թուականին սկսեալ, Արշակ Ջամալեան քիչ մը ամէն տեղ է, կազմակերպումներ գործի եւ յեղափոխական գործունէութեան մարզերուն վրայ, Հ. Թ. Դաշնակցութեան վերին ժողովներուն եւ պատասխանատու մարմիններուն մէջ:

Վրայ կը հասնի 1914ի Համաշխարհային Առաջին Պատերազմը: Կարինի Ընդհանուր ժողովին թէեւ ներկայ չէ եղած, բայց կ'ընտրուի Հ. Թ. Դաշնակցութեան Բիւրոյի կովկասի եւ հատուածի անդամ՝ Ն. Կարճիկեանի հետ: Միեւնոյն ժամանակ կը նշանակուի կամաւորական խումբի վարիչ: Ուսանողներէ բաղկացած կամաւորական խումբի մը գլուխն անցած կ'երթայ Վասպուրականի ճակատ ու կը մասնակցի կռիւներուն, ապա կ'անցնի Պարսկաստան՝ միանալու համար Անդրանիկի կամաւորական գունդին:

Թիֆլիսի Ազգային խորհուրդի գործունէութեան մէջ, աւելի ուշ՝ Կովկասի նորակազմ Մէյմի անդամ: 17 Նոյեմբեր 1917ին Կովկասի մէջ գտնուող ուսուսական բանակին հրամանատարը թրջական Յրգ բանակի հրամանատար Ֆերիկ Վեհիպ փառայնէ կը ստանայ նամակ մը՝ զինազդար կնքելու առաջարկով: Անդրկովկասի կոմիսարիատը, յեղափոխական կեդրոնի ու հրամանատարութեան համաձայնութեամբ, կ'ընդունի թրջական առաջարկը եւ ուսումնական կ'ուղարկեն հինգ հոգի՝ հրապարակապէս կողմէ, Արշակ Ջամալեան, վրացի թեւազայն եւ ուսու Սմիլնով՝ իբրեւ Անդրկովկասի կոմիսարիատի ներկայացուցիչներ: Երգիկայի մէջ 5 Դեկտեմբերին հինգ հոգիները այս յանձնախումբը կը կնքէ առաջին զինազդարը՝ յանուն կովկասեան ժողովուրդներուն:

Ըստ Միւսիւնի վրացեանի՝ «1918ին, փաստօրէն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաչեք»՝ հազիւ 12,000 քառ. քիլոմէթր աղբատու կիսակրծան մի երկիր... սով ու հիւանդութիւն, աւար ու աւեր, լցւոյ ու թշուառութիւն, կոտորածի սարսափ: Իսկ միւս կողմից, էնդլերի բանակը յաղթական՝ համաթրջական երազներով տոգորուած, որ Հայաստանի մարմինի վրայով ձգտում էր դէպի Ապշերոն ու Թրքաստան: Իսկ Թիֆլիսում տիրում էր կատարեալ չիֆթ:

«1918 Մայիս 26ից յետոյ, հայ-վրացական յարաբերութիւնները լարուել էին ծայր աստիճանի վրայից»՝ արեւելքը լարեցած իրենց անկախութեամբ ու գերմանական հովանաւորութեամբ՝ թշնամանքով էին նայում «ուսուսների փէշից պոկ չեկող» հայերին...:

«... Հ. Ազգ. խորհուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարութեան կազմակերպման, ի վերջոյ, երկար բանակցութիւններից յետոյ, Քաղաքնուկի յարողուցնելու կեանքի կոչելու կառավարութեան: Կառավարութիւնը կարգաւորեց մի շարք ընկերակի խնդիրներ, Վրաստանի կառավարութեան մօտ դիւանագիտական ներկայացուցիչ նշանակեց Արշակ Ջամալեանին»:

30 Յուլիսին Թիֆլիսին Երեւան կը հասնին Գերմանիոյ ներկայացուցիչ զօր. Ֆոն Քրէս, Աւստրիոյ ներկայացուցիչ պարոն Յրանգէլ-

թայն եւ Արշակ Ջամալեան: Երեւանի մէջ զօր. Ֆոն Քրէս Արշակ Ջամալեանին հետեւելու կ'ըսէ. «Մեր յարաբերութիւնները տաճիկներու հետ բաւական վատացած են շնորհիւ Անդրկովկասեան գործերու մէջ մեր միջամտութեան: Թուրքերը այս երկիրը իրենց կը նկատեն ուսուսերու հետանալէն ետք, եւ յանձնառման մենք անոնց ըսինք «հալթ» (կեցիք). բնական է, որ պէտք է լարուած ըլլան մեր դէմ»:

Վրաստանի կառավարութիւնը 22 Դեկտեմբեր 1918ին կը պատրաստուէր գէնքի ուժով ստիպել հայերը, դուրս ելլելու Լոռիէն՝ յանձնելով Շահալի կայարանը: Գերմանիոյ զինուորական ներկայացուցիչ զօր. Ֆոն Քրէս ուզած է համոզել Հայաստանի ներկայացուցիչ Արշակ Ջամալեանը՝ ընդունելու վրացիներու վերջնագիրը եւ առանց արիւնահեղութեան պարպելու «վրացական» հողը: Ջամալեանի այս հարցումին, թէ՛ Գերմանիա ինչ գործ ունի հայ - վրացական սահմանային վէճին, զօր. Ֆոն Քրէս կը պատասխանէ ըսելով, որ Գերմանիա՝ իրեւ Վրաստանի դաշնակցի, պարտաւորուած է կաշտպանել վերջինիս սահմանները, ինչ սահմաններ որ ցոյց կու տայ վրացական կառավարութիւնը:

36 տարեկան Արշակ Ջամալեան բացառիկ կարողութիւններ ունէր իբրեւ կազմակերպիչ, ճկուն դիւանագէտ էր արտաքին յարաբերութիւններուն մէջ, օտար լեզուներէն ուսուսելէն, գերմաներէնի եւ ֆրանսերէնի իր ծանօթութիւնը առաւելութիւն մըն էր, որպէսզի ան դառնայ Դաշնակցութեան եւ Հայաստանի Հանրապետութեան «չըլուծու գեանք»՝ բազմաթիւ երկիրներու մէջ:

1919ին կ'անցնի Հայաստան, կ'ընտրուի խորհրդարանի անդամ եւ զինահաւաքման արտակարգ քոմիսար: 1920ին կը ստանձնէ հաղորդակցութեան նախարարութիւնը: Իր օրով է, որ Ալեքսանդրապոլի մէջ կը հաստատուի վայրաշարժերու եւ վախճաններու նորոգութեան գործարան մը:

10 Օգոստոս 1920ին, Թիֆլիսի մէջ, Մոսկուայի ներկայացուցիչ Լարանի հետ կը ստորագրէ զինադադարի համաձայնութիւն մը, որուն հիման վրայ կը դադրին Կարմիր Բանակին հետ Շարուր - Նախիջեւանի ճակատի կռիւները:

1921ին գարնան կը մասնակցի Ռիկայի մէջ Ենֆէի եւ Սահակ Տէր Գարրիէլեանի (երկուքն ալ հետագային գնաղահարուած) հետ տեղի ունեցած բանակցութիւններուն, Փետրուարի եւս Ապստամբութեանն ետք ստեղծուած գրութիւնը կարգադրելու եւ Ռուսիոյ Հայաստանի յարաբերութիւնները ճշգրտելու համար:

Երբ Վրաստանի, Ազրպէյճանի, Հիւսիսային Կովկասի եւ այլ վայրերու մէջ հայ բռլչեւիկները կ'ենթարկուէին անողորմ հալածանքի, Հայաստանի առաջին անկախ հանրապետութեան կառավարութիւնը անոնց տուած էր Հայաստանի մէջ ապրելու եւ աշխատելու կարելիութիւնը: Ա. Կասեան, Ա. Մուսեան, Ս. Խանյան, Դ. Շահվերդեան, Մ. Սահակեան, Ե. Երզնկեան, Աւիս Նուրիջանեան, Աղասի Խանջեան եւ ուրիշներ իրենց կեանքը փրկեցին Հայաստանի կառավարութեան շնորհիւ:

1920 թուականի սկիզբները Հայաստան արդէն թատերաբեմ էր բռլչեւիկեան խռովութիւններուն: Երեւանի եւ Դիլիջանի մէջ ներքին գործոց նախարարի կարգադրութեամբ կը ձեռնարկուէին քանի մը բռլչեւիկներ, հակապետական եւ հակապետական գործունէութեան յանցանքով:

20 Փետրուարին խորհրդարանին մէջ արտասանած իր ճառին ընթացքին Արշակ Ջամալեան ըսած է. «Միլիոն շրթման եւ բոլշեւիկների դաշինքը, դժբախտաբար, Եջմարտուիւրն է, որքան հետեւանքը այն է, որ մեր ժողովուրդի գոյութիւնը քղաքախաղի վրայ է դրում: Թիֆլիս եղած ժամանակ, բռլչեւիկներ Անդրկովկասեան Գերագոյն Գործադիր Մարմնի շրջանային կոմիտեի ակամաւոր անդամներից մէկը յայտնեց ինձ, որ Նոյեմբեր 27ին Պարսում, բռլչեւիկների եւ երիտասարդ թուրքերի միջեւ կայացել է մի համաձայնութիւն, որ տանկական զօրքերը Հայաստանի վրայով պիտի անցնեն Դեմիկիլի թիկունքը բռնելու համար: Նոյն այդ անձնաւորութիւնը սասց, որ իրենք միջոցներ պիտի ձեռք առնեն հայերի կոտորածի առաջն առնելու համար, բայց, ի հարկէ, կարող է իրենց այդ չլազուրուի, սրանք փաստեր են ոչ ոք հերքել չի կարող»:

դափոխութիւնը պաշտպան է ճնշուած ազգերուն, եւ ուրեմն չի կրնար չպաշտպանել նաեւ հայ ժողովուրդը:

Ա. Ջամալեան Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումէն ետք որոշ ժամանակ թաքնուած կը մնայ Երեւանի մէջ, ետք գաղտնի կերպով կ'անցնի Թիֆլիս, ապա՝ Կ. Պոլս, ուր կը շարունակէ գործել իբրեւ Դաշնակցութեան Բիւրոյի անդամ: Արտասահմանի մէջ Ջամալեանի ունեցած քսան տարուան կեանքը լեցուն է հասարակական - կուսակցական բեղուն գործունէութեամբ:

1923ին, Հ. Թ. Դ. Վիեննայի խորհրդաժողովէն ետք Հ. Թ. Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտէին իր շրջանը իբրեւ գործիչ կը հրաւիրէ Արշակ Ջամալեանը:

Է. Ալինուսիէն ետք, Հայ Օգնութեան Միութիւնը շատ բան կը պարտի Արշակ Ջամալեանի: Մինչ առաջինը եղաւ կազմակերպութեան իրական հիմնադիրը, երկրորդը Ամերիկայի կ'երթայ ժամանակաշրջանի մը մէջ, երբ կազմակերպութիւնը յայտնապէս տկարացած՝ պէտք ունէր ուժեղ ձեռքի մը, որ հասնէր օգնութեան: Այդ ձեռքը եղաւ Արշակ Ջամալեան: Ան կ'այցելէ Միացեալ Նահանգներու բոլոր քաղաքները եւ երախտագիտութեան արժանի ծառայութիւն մը կ'ընծայէ իրական փութուստի վտանգին ենթարկուած ՀՕՄ կազմակերպութեան:

ՀՕՄ «Յուշամատեն»ին մէջ կը կարդանք հետեւեալը.՝

«Բացառիկ իմացականութեամբ եւ բազմապիսի շնորհներով օժտուած գործիչ մըն էր Ջամալեան: Փայլուն հոգեւոր էր, որ գիտէր դիւրութեամբ իրեն կապել բազմաարդ արհմեթը: Սքամիտ, բնաւորութեամբ շէն, գուռաք, դիւրահաղորդ, բայց նաեւ չափի զգացումով եւ հաւասարակշիռ, ան ճշմարիտ զարեղ էր ընկերակալ շրջանակներուն եւս: «Ունէր գործելու անպարտ ռաւոյն, որ յաճախ կը վարակէր ամէնէն անտարբեր կարծուած շրջանակներն իսկ: Եռանդով ու հաւատքով կը փաթէր գործի, գոր գրեթէ միշտ յաջողութեամբ կը վերջացներ: Հմուտ ու բեղմնաւոր միտք, յարգանք կը պարտադրէր իր շրջապատին: «Արշակ Ջամալեան, որքան ծառայեց իր կուսակցութեան մեծ նուիրումով, նոյնքան ծառայեց Հայ Օգնութեան Միութեան: Ամերիկայի մէջ շուրջ 10 տարեկան հանգիստ էր: Մեծ հաւատք ունէր հայ կանացի կազմակերպութեան առաջնորդութեան եւ անոր փայլուն ապագային հանդէպ: Հետագային ան յաճախ դարձաւ Հայ Օգնութեան Միութեան կերակրացուցիչը Ֆրանսայի, Պուլիարիոյ, Ռուսիանիոյ, Եգիպտոսի մէջ եւ այլուր՝ իբրեւ շրջաններու եւ մասնագիտորէ կազմակերպիչ՝ նոր ուժեր քաշելով Միութեան մէջ եւ զանցնել լծելով գործի: «Արշակ Ջամալեան եղաւ մեր միութեան մեծ կազմակերպիչներէն եւ առաջնորդներէն մէկը»:

Արշակ Ջամալեան Երեւանի մէջ 1919ին գուսարուած Հ. Թ. Դ. 9րդ Ընդհանուր ժողովէն սկսեալ մասնակցած է Հ. Թ. Դաշնակցութեան բոլոր ընդհանուր ժողովներուն: Մինչեւ 1933 տեւապէս եղած է Բիւրոյի անդամ, իսկ այդ թուականէն ետք, մինչեւ իր մահը, եղած է Դաշնակցութեան քաղաքական գործիչը: Սերտ յարաբերութիւններ պահած է կովկասեան ժողովուրդներու ներկայացուցիչներուն հետ: Յաճախ ճամադորած է Եւրոպայի քաղաքական կարեւոր կեդրոնները, եւ օտարներուն մէջ միշտ շահագրգռութիւն ստեղծած է հայ ժողովուրդի անկախութեան ձգտումին հանդէպ:

ՀԱՄՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Միջապալին Բաղաբախան Կեանք

ԱՐԳԻԼԵԱԼ ԳՕՏԻՆ՝ ԱՊՕՐԻՆԻ

Նախագահ Պուլի կողմէ յառաջ նետուած «գերօհանդուրժողութիւն» բանաձեւումը, որ կ'ակնարկէ իրաքի կողմէ ՄԱԿի բանաձեւերու ոտնակոխումի պարագային Ուաշինկթընի որդեգրելիք քաղաքականութեան, ըստ երեւոյթի, դարձած է «երկու առ հարիւր հանդուրժողութիւն»: Ամերիկացի պաշտօնատարներու համաձայն, իրաքեան ուժեր անգամ մը եւս կրակ բացած են թախիքի արգիլելու գոտիին մէջ սաւառնող ամերիկեան օդանաւերու ուղղութեամբ: Ամերիկացիք նախապէս յայտարարած են, թէ նման արարք պիտի ծառայէ իբրեւ անմիջական արդարացում՝ իրաքի վրայ շղթայազերծելիք որեւէ յարձակումի, եւ այդ ոչ միայն իբրեւ «ինքնապաշտպանութիւն», այլ նաեւ՝ իբրեւ ոտնակոխում վերջերս որդեգրուած ՄԱԿի բանաձեւին:

Սակայն Պուլի վարչակազմը ցարդ այս ոտնակոխումը չէ օգտագործած իրաք ներխուժելու համար, ոչ ալ հարցը դրած է ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի սեղանին վրայ:

Նման կեցուածքի շատ լաւ պատճառ կայ: Խորքին մէջ թախիքի արգիլելու գոտին ի սկզբանէ ապօրինի եղած է, եւ ամերիկացի ղեկավարներու որոշումը, իրաքի այս ոտնակոխութիւններու չհակադարձելու, ինքնին լուեայն խոստովանանք է արգիլելու գոտիի ապօրինի ըլլալուն:

Ամերիկեան կառավարութիւնը միակողմանիօրէն հաստատած է արգիլելու գոտին, Մոցի պատերազմէն անմիջապէս ետք, ենթացող ՄԱԿի բանաձեւեր ի գործ դնելու համար: Սակայն կայ ճնշող հարց մը՝ ՄԱԿ երբեք չէ արտօնած նման գոտիի մը հաստատումը: Ամերիկացի պաշտօնատարներ միշտ ալ պնդած են, թէ Ուաշինկթըն, իբրեւ ՄԱԿի անդամ, իրաւունք ունի ՄԱԿի որեւէ որոշումի գործարդութեան համար հարկ եղած միջոցներու դիմելու: Սակայն նման կեցուածք, խորքին մէջ, արդարաւախ չէ: Կազմակերպութեան մը բանաձեւերուն գործարդութիւնը վերապահուած է այդ կազմակերպութեան եւ ոչ՝ անոր անդամներէն մէկուն:

Տարիներ առաջ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը ապօրինի ամպարկօ մը հաստատեց Նիքարակուայի դէմ: Հարցը հասաւ Համաշխարհային Ատեան, որ ի նպաստ Նիքարակուայի վճիռ արձակեց եւ Նիքարակուայի հատուցում տրամադրելու որոշում տուաւ:

Ատեանի այս պաշտօնական որոշումը տակաւին գործադրուած չէ: Միացեալ Նահանգներ հետեւողականօրէն կը մերժեն գործադրել զայն եւ արգիլք կը հանդիսանան ՄԱԿի կողմէ վճիռը գործադրելու որեւէ քայլի:

Ենթադրեմք, որ Նիքարակուա միակողմանի կերպով որոշէր գործադրել Համաշխարհային Ատեանին որոշումը եւ Մ. Նահանգներու հարաւային տարածքին վրայ թախիքի արգիլելու գոտի մը ստեղծէր՝ իր օդանաւերով հսկողութեան տակ առնելով շրջանը: Ենթադրեմք նաեւ, որ իւրաքանչիւր անգամ, որ ամերիկեան ռատարներ միջամտէին, Նիքարակուայի օդաչուներ կրակ բանալով՝ ռատարի կեդրոնները վարող ամերիկացիներ սպաննէին: Ի՞նչ պիտի ըլլար Ուաշինկթընի կեցուածքը: Ամերիկացի ժողովուրդը ի՞նչ պիտի ըսէր: Բոլորը գիտեն պատասխանը:

Իրաքի մէջ թախիքի արգիլելու գոտիի հաստատումի ապօրինի ըլլալը ի՞նչ կ'ըսէ հարիւրաւոր իրաքեաներուն մասին, որոնք զոհ գացին ամերիկեան ռումբերու՝ այդ գոտիի «պահպանման» ընթացքին: Չնայ, որոնց կարգին է 13ամեայ Օմար Հարպի ժառանգիր, որ երբ 2002ի Մայիսին իր ոչխարները կ'արածէր, «արգիլելու գոտի»ի ռումբի բեկոր մը ստացաւ իր գլուխին:

Ի՞նչպէս կարելի է արդարացնել ապօրինի որոշումի մը հիմամբ մարդոց սպանութիւնը:

Պուլի վարչակազմը ճիշդ որոշում տուած է «գերօհանդուրժողութիւն» բանաձեւումը չգործադրելով: Փաստօրէն իրաք ներխուժելու համար Պուլի վարչակազմը պէտք է այլ տեղ փնտռէ իր արդարացումը:

ՕՅԱԻՆ ԱՆՂԱՍԱԿՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՍՏԱԾԵԼԷ ԱՈԱԶ

ԹԻՖԼԻՍ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԻ ԿԸ ԿԱՐՕՏԻ

21 Նոյեմբերին, երբ նախագահ Էտուարտ Շեւարտնածէ յայտարարեց ՕԹԱՆի անդամակցութեան դիմելու վրաստանի մտադրութիւնը, ան ընդունեց, որ իր երկիրը երկար ճամբայ ունի կտրելիք նախքան ՕԹԱՆի անդամակցութիւնը: Ան նաեւ անդրադարձաւ բանակի բարեկարգումներուն՝ իբրեւ իր կառավարութեան կարեւորագոյն առաջնահերթութիւնը: Այդ բարեկարգումները արդէն իսկ սկսած են, եւ Միացեալ Նահանգներ կ'օգնեն վրացական բանակի արդիականացման աշխատանքներուն երկու տարեան վրայ երկարող եւ 64 միլիոն տոյար արժող ծրագրով մը, որ կը կոչուի «Մարզել եւ զինել»:

Լստ Շեւարտնածէի, «որչէք գործադրութեան գործակալութեան բարեկարգումը նաեւ սկսած է: Դատական կառուցի բարեկարգումը ամբողջացած է եւ յատուկ ուշադրութիւն կը դարձուի պիւտեճի եկամուտներուն բարձրացումին եւ փտածութեան դէմ պայքարին»:

Պերլինի մէջ հաստատուած փտածութեան դէմ պայքարող ոչ կառավարական «Թրեւնփերընսի Ինթըրնէշնըլ» կազմակերպութեան 28 Օգոստոսին հրապարակած տեղեկագիրին մէջ վրաստան, Ուրբանիայ եւ Վիեննամի հետ 102 երկիրներու մէջ գրաւէ 88րդ դիրքը:

